ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/5.1.2-3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. օգոստոսի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N 2-ի 5.1 միջոցառման «Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում» 5.1.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության խորհրդական
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Լ. Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- 2024 թվականի հուլիսի 26-ին «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ հետ կնքված N 318-24 պայմանագրում կատարել փոփոխություններ:

Լսեցին՝

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ Համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի և «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ը միջև կնքված պայմանագրի՝ նախատեսված է Հայաստան-Իրան տեխնիկական հանձնաժողովի նիստի կազմակերպման ապահովում՝ 4.231.200 (չորս միլիոն երկու հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամի (այդ թվում՝ 705.200 (յոթ հարյուր հինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ ԱԱՀ) ֆինանսավորմամբ:

Հայաստան-Իրան տեխնիկական հանձնաժողովի նիստի՝ Հայաստանում կազմակերպումը նախատեսված էր 2024 թվականի հուլիսի 30-ից օգոստոսի 1-ը, սակայն համաձայն ՀՀ արտաքին գործերի

նախարարության 2024 թվականի հուլիսի 30-ի N 1117/39830-24 գրության (կցվում է)՝ իրանական կողմը խնդրել է հետաձգել նշված նիստը:

Միաժամանակ, համաձայն ՀՀ արտաքին գործերի նախարարության 16.05.2024 № 1103/26204-24 գրության՝ առաջարկվում է դիտարկել ԵԴԺՀ-ի Տուրիզմի նախարարության, Եթովպական ավիաուղիների և «ET Holidays» ընկերության ղեկավար կազմի համար ՀՀ ճանաչողական այցի կազմակերպման հնարավորությունը, որին ի պատասխան՝ Զբոսաշրջության կոմիտեն հայտնել է պատրաստակամություն (գրություն՝ 28.06.2024թ. N 08/13169-2024) կազմակերպել նշված այցը (գրությունները կցվում են):

Իրանական կողմից նիստի անցկացման նոր ժամկետների վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված՝ առաջարկվում է կատարել փոփոխություններ պայմանագրում՝ Հայաստան-Իրան տեխնիկական հանձնաժողովի նիստի կազմակերպման փոխարեն նախատեսելով Հայաստան-Եթովպիա աշխատանքային նիստի կազմակերպումը:

Նշվեց, որ առաջարկվող փոփոխության արդյունքում պայմանագրով նախատեսված գումարի փոփոխություն չի նախատեսվում, սակայն նախատեսվում է կատարել փոփոխություններ «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ հետ կնքված պայմանագրում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի և «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ միջև 2024 թվականի հուլիսի 26-ի կնքված N 318-24 պայմանագրում կատարել փոփոխություններ՝ Հայաստան-Իրան տեխնիկական հանձնաժողովի նիստի կազմակերպման փոխարեն նախատեսելով Հայաստան-Եթովպիա աշխատանքային նիստի կազմակերպումը:
2. Պատրաստել «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ հետ կնքված 2024 թվականի հուլիսի 26-ի N 318-24 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի նախագիծ և առաջարկել ընկերությանը կնքել նշված համաձայնագիրը:
3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Ա.Սողբաթյան -

Լ.Պետրոսյան -

Շ.Հովսեփյան -